

84

ԽԱՀԱՐ

Պրոլետարիական բանակը յերկրմանի, միացել.

ՀԱՅԱ

# ՁԵՌՆԱՐԿ

Բ. Գ. Կ. Բ. ՓԻԶԻՔԱԿԱՆ  
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՄԵԹՈԴԸ

ՑԵՐԵՎԱՆ

1931


355 91  
ԽՍԴՐ Պրոլետարիներ բոլոր յերկրների, միացեք. ՀԽԾ

«Հայոցագում Խմ»  
Բ. Գ. Բ. օստրի պետ  
Բ. Շաղնօնիկով  
15 տարիին, 1930 թ.

## ≡ ԶԵՌՆԱՐԿ ≡

Բ. Գ. Կ. Բ. ՖԻԶԻՔԱԿԱՆ  
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՄԵԹՈԴԸ



Հ. Հ. ԴԻՎ. ՔԱՂՔԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1931 թ.

V Управление Штаба РККА

Руководство  
по  
Физической подготовке  
Р. К. К. А.

Организация и методика

ԹԵՏՐԱՏԻ ՏՄԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ № 1152  
ԳՐԱԴԵՊԱԿԱՎԱՐ 6173 (Բ)  
ՏԻՐԱԺ 2000



1-354791

Հ Բ Ա Մ Ա Ն

ԽՍՀՄ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՉՐԴԻ

31 հոկտեմբերի, 1929 թ.

№ 337

Վերջին տարիներում կարելի յէ մատնանշել ֆիզիքական դաստիարակության վորոշչափով լավացումը բանակի և նավատորմիղների զորամասերում և ռազմական-դպրոցական հաստատություններում։ Սակայն, ձեռք բերած արդյունքները բոլորովին բավարար չեն։ Բգկի մարտական հզորության ամրացումը սերտ կերպով կապված է նրա ֆիզիքական պատրաստականության մակարդակի բարձրացման հետ։ Այս հանդամանքը պետք է յուրացնի Բգկի թե՛ ամբողջ շարքային և թե՛ պետքի կազմը։

Ֆիզիքական պատրաստությունը, նպաստելով խաղաղ ժամանակի մարտական ուսուցման հաջողությանը, մարտիկների մեջ մշակում է դիմացկունություն, շարժունակություն, ակտիվություն, համարձակություն, տոկունություն և այլ հատկություններ, վորոնք անհրաժեշտ են ժամանակակից յերթա-մարտական պարագայի գործողությունների համար։

Ֆիզիքական մարզանի մեթոդները պետք է մտցնել գորքի ուսուցման և դաստիարակության ամրող սիստեմի մեջ։

Սնայպերի, գնդացրորդի, հետախույզի, կազմակորի, պոնտոնյորի, ջրասույզի, աղաջուկի արվեստը հավասար չափասար չափով կախված է նրանց մասնագիտական, տեխնիկական և ֆիզիքական մարզանքից։

Այդ մարդանքը, չսահմանափակվելով պարտադիր վարժություններով պլանային ուսուցման ժամերին,

պետք ե տոկումությամբ կիրառել նույնազես և արտա-  
դպրոցական պարապմունքների կարգով։ Սպարտային  
աշխատանքը բանակում պետք ե կատարել պարզեցրած,  
մասսայական-մատչելի մեթոդներով և պետք ե ընդգրկի  
բոլոր գորամասերի անձնական կազմի 100 տոկոսը։

Ֆիզիքական պատրաստության և սպորտի, վորպես  
մի անբաժան մասը մարտական դաստիարակության բա-  
նակում, — եխմնական անցկացնողը հանդիսանում է  
հրամատարական կազմը։

Այս հանգամանքը հարկավոր է խստորեն հաշվի առ  
նել ԲԳԿԲ ռազմական դպրոցների և մյուս ռազմական  
դպրոցական հաստատությունների ուսուցման ժամա-  
նակ։ Կուրսանութիւնը մեթոդական պատրաստականու-  
թյունն ու անձնական ֆիզիքական զարգացումը պետք  
է ստուգվի նույնչափ խնամքով, վորչափ և նրա մյուս  
հրամատարական պատրաստության հիմնական բաժին-  
ները։

Յուրաքանչյուր շարային հրամատար պետք ե բագ-  
մակողմանի ֆիզիքականապես պատրաստված մարտիկի  
որինակը լինի։

Հրամկազմը միաստեսակ պետք ե ձեռք բերի հմտու-  
թյուններ թե՛ մարտիկների ֆիզիքական պատրաստու-  
թյան գործնական զեկավարության մեջ և թե՛ զանազան  
տեսակ ուսուցմանն ու յիրթային-մարտական աշխա-  
տանքին նրանց ֆիզիքական պատրաստության աստի-  
ճանը վորոշելու մեջ։ Այնինչ հրամատարական կազմի  
անձնական ֆիզիքական մարզվածությունը և հրա-  
հանդչական ունակությունները հաճախ իրենց բարձ-  
րության վրա չեն գտնվում, վորը պետք ե վերագրել  
ԲԳԿԲ ֆիզիքական պատրաստության և սպորտի դըր-  
ման հիմնական պակասություններին։

Բոլոր աստիճանների գորական պետերը պետք ե  
բարձրացնեն ակտիվությունը ֆիզիքական աշխատա-  
քում, պետք ե բարձրացնեն անձնամբ իրենց և իրենց յեն-  
քակա պետկազմի մեթոդական վորակը։

Ֆիզիքական մարզանքը մի բարդ մանկավարժական  
և առողջապահական պրոցես է։ Անշնորհք, մակերե-

վութորեն, վոչ լուրջ մոտեցրամ այդ գործին կարող ե  
բացասական հետեվանքներ ունենալ։ Այդ պատճառով,  
ֆիզիքական պատրաստության ամբողջ շարային և ար-  
տաշպարոցական աշխատանքում պարտադիր է մշտապես  
համաձայնեցում, հրամատարի, քաղաշխատողի և  
բժշկի միջև։

ԲԳԿԲ շարքերում գտնվելլ ֆիզիքական կատարելա-  
գործման կարեվորագույն ետապներից մեկն ե բանվորա-  
գուղացիական յերիտասարդության համար։ Ֆիզկուլ-  
տուրական ունակությունները, նույնկերպ, ինչպես և  
քաղաքական ու ընդհանուր-կուլտուրական գիտելիքնե-  
րը, յերիտասարդությունը, ԲԳԿԲ զորամասերից հեռա-  
նալով, իր հետ և տանում Փարբիկներն ու գործարան-  
ները, գյուղը։

Անհրաժեշտ է, վոր կարմիր բանակը դառնա Փի-  
զիքական կուլտուրայի խսկական մասսայական դպրոց։

Ֆիզիքական աշխատանքի ժառանգորդության նշանա-  
կությունը գպրոցականների, նախակոչելիների, կոնտին-  
գենտների և բանակի մեջ կատարելապես ակըն-  
հայտնի յէ։ Հետեւապես ակնհայտ է և ուսումա-  
կան աշխատողների հիմնական ակտիվ մասնակցության  
անհրաժեշտությունը ֆիզկուլտուրայի խորհուրդների  
գործունեյության մեջ և այն մյուս քաղաքացիական  
կազմակերպությունների և հիմնարկությունների գոր-  
ծունեյության մեջ, վորոնք տանում են այդ աշխա-  
տանքը։

ԽՍՀ Միության Հեղափոխական Ռազմական Խոր-  
հուրդը, ամենալուրջ նշանակությունը տալով ֆիզիքա-  
կան դաստիարակության ու սպորտի դրմանը, վորպես  
ԲԳԿԲ մարտական պատրաստության լավացման պայ-  
մաններից մեկը, խնդիր և զնում, բանակի բոլոր պե-  
տերի կազմի առաջ— հայտաբերել մաքսիմալ յեռանդ և  
տոկություն՝ մարտական ուսուցման այդ բաժինն  
իր արժանի բարձրության վրա դնելու համար։

ԽՍՀ Միության ռազմական և ծովային  
գործերի ծողովրդական կամխար և ՀՌԽ  
նախագահ՝ ՎԱՐԱՇԻԼՈՎ  
(Ֆիզիքական պատրաստության և սպորտի ինսպեկցիա)։

## ԳԼՈՒԽ

### ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՑՈՒՆՆԵՐ

1. Ֆիզիքական պատրաստությունը—մարտիկի ու սուցման և դաստիարակության հիմնական բաժիններից մեկն է:

Նրա նպատակն է— մարգել զորքերին յերթամարտական կյանքին և մարտի համար ակտիվ զործողություններին ու մասնավորապես՝ նպատել բջիջ մարտիկներին՝ արագ ու հաստատապես յուրացնելու շարադին, առենիկական և դաշտային պատրաստության բոլոր անհրաժեշտ ունակությունները:

2. Ծերթային և մարտական պարագայում միայն Փիզիքապես վարժված մարտիկն ե ընդունակ լիովին ուղարջործելու իր բարոյական առավելությունները, գիտելիքները և մարտի տեխնիքական միջոցները: Ֆիզիքապես վաս մարզված զորամասը չի կարող լիակատար չափով մարտունակ լինել:

3. Ֆիզիքական պատրաստության խնդիրները բջիջ բանակում բնորոշվում են ժամանակակից տակտիկայի, մարտի բարդ ձևերի պահանջներով և կարմիր հանակի յերկային-միլիցիոն կազմակերպության առանձնահատկություններով:

Ֆիզիքական պատրաստության պետք ե՝

ա) վարժեցնի մարտիկի առողջությունը, բարձրացնի նրա ընդհանուր ֆիզիքական զարգացումը և պատվաստի անհրաժեշտ առողջապահական հմտություններ.

բ) նպաստի մարտիկի և հրամատարի բարոյական կամքային դաստիարակությանը.

շ) ապահովի բազմակողմանի կերպով զորքերի մարզվածությունը (դիմացկունություն և շարժու-

նություն) ֆիզիքական աշխատանքի բոլոր տեսակներում՝ յերթում և մարտում.

դ) ընդդրկի ամբողջ շարքային և պետերի կազմին ֆիզիքական կուլտուրայի ակտիվ պարապմունքներում:

4. Ֆիզիքական պատրաստությունը զորամասերում, ուղղմա-դպրոցական հաստատություններում և վարժակայաններում պետք ե անցնել այնպես, վոր դաստիարակվի այնպիսի մարտիկ, վոր՝

ա) ընդունակ լինի կրելու յերթամարտական դըմքարություններն ու զրկանքները, լինելու մարդուն և արագ շարժումների մեջ.

բ) լինի ձեռնարկող, ակտիվ, համարձակ, վճռական ու տոկուն գործողությունների մեջ, տիրապետի պողպատե զավածության և անհաղթելի կամք ունենա մարտերում.

շ) կարողանա արագորեն կողմորոշվել պարագայում, ճշտորեն հաշվի առնել իր ուժերը և նրանց ճշտորեն ոգտագործել.

դ) դաստիարակված ընկերական ողջության վորով, իրար փոխարինելու և փոխալարձ գործողությունների վորով.

ե) լավ մարզված լինի՝

— զանազան տեսակ շարժումների մեջ (քայլք, վաղք, սողալ, դահուկներ, լող և այլն).

— ամեն տեսակ բնական արդելքները հաղթահարելու մեջ և արհեստական արդելքները հաղթահարելու մեջ.

— մասնագիտական ֆիզիքական աշխատանքում (հրածիդ, գնդացրորդ, հեծելաւի, հրետավոր, կապավոր, սապյոր և այլն).

— ձեռնամարտի ձեվերի մեջ.

շ) լինի ակտիվ և գրադեմ ֆիզկալտուրիկի:

5. Կարմիր Բանակի հրամատարն իր ֆիզիքական պատրաստականությամբ օրինակ պիտի ծառայի շարժային մարտիկների համար:

Բայց դրանից, նա պարտավոր և ունենալ կազմակերպչական-հրահանդչական դիտելիքներ և ունակու-

թյուններ, վորոնք բավական կլինեն իրեն հանձնած զորամասի կամ ստորաբաժանման Փիղիքական պատրաստությունն անմիջապես դեկավարելու համար:

6. ԲԳԿԲ Փիղիքական պատրաստությունը կառացվում է Փիղիքական զարգացման, զորքերի մարտական ուսուցման ամբողջ սիստեմով ու զորամասերի ամենորյա կենցաղային ուժիմով վարժեցնելու և մարզելու միջոցների ու մերժումների գուգակցության հիման վրա:

ԲԳԿԲ Փիղիքական պատրաստության օխտեմը կազմում են աշխատանքի հետեւյալ ձեզերը, վորոնք պարտադիր են զորքերի բոլոր տեսակների համար.

ա) առողջապահական և ընդհանուր-մարզական նըշանակություն ունեցող ամենորյա առավոտյան Փիղիքական վարժությունները.

բ) կրթական բնույթ ունեցող Փիղիքական պատրաստության պլանային դասեր.

դ) մարտիկի և հրամատարի կրթական Փիղիքական ունակությունների և բարոյական-կամքային հատկությունների մարզություն՝ շարային, մասնագիտական և դաշտային պարապմունքների ժամանակ.

դ) արտադպրոցական սպորտային աշխատանք (մասսայական և խմբակային).

ե) զորամասի ուսուցման և կենցաղային ուժեղմի ռացիոնալիզացիա.

դ) զորական մբցակցություններ,— կրթական և սպորտային.

ը) մարտիկի և հրամատարի պարբերական ստուդումներ և զորամասերի տեսչական զննություններ:

Մանոքություն.— Զորքերի Փիղիքական պատրաստականությունը, մանավանդ, հայտաբերվում է մանյովների ժամանակ, յերբ մարտական պատրաստության հանրագումարներն են ցուցաբերվում ամրողությամբ վերցրած:

Թվարկած միջոցառումները Փիղիքական պատրաստության վերաբերյալ հիմնականում պարտադիր են ԲԳԿԲ բոլոր տեսակի զորքերի համար:

7. Հեծելակի, հրետափորի, սապյորի, կապավորի,

զրահավորի և մյուս մասնագիտությունների մասնագիտական Փիղիքական մարզանքը պետք է անցնել առավելապես շարային և տեխնիկական պատրաստության ընթացքում, համապատասխան զորքերի յուրաքանչյուր տեսակի ծառայության խնդիրներին և առանձնատկություններին:

8. Զորական մասերի հրամատարությունը պարտավոր է հետևել Փիղիքական պատրաստության սիստեմի բոլոր ողակների կիրառելուն: Միայն այդպիսի պայմանով հնարավոր ե բանակի շարքերում, ծառայության կարճ ժամկետում (մանավանդ յերկրային զորամասերում) պատրաստել վարժ և մարզուն մարզիկները:

9. Փիղիքական պատրաստությունը մարտական ուսուցման և դաստիարակության ընդհանուր սիստեմի մի անբաժան մասն է: Հրամատարական կազմն իր վրա յե կրում Փիղիքական պատրաստության դեկապարբյանները ու նրա հաջողության պատասխանատվությունը ուղղման-դպրոցական հաստատություններում և շարային ստորաբաժանումներում:

Դիվիզիաների գորամասերի, ուղման-դպրոցական հաստատությունների Փիղիքական պատրաստության հրահանգիչները, այլև Փիղիքական պատրաստության բժիշկ-հրահանգիչներն առավելապես կազմակերպչական ու հրահանգչական աշխատանք են տանում բարձրացնելու պետերի կազմի համապատասխան մեթոդական վորակը:

## ԳԼՈՒԽ II.

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

10. ԲԳԿԲ Փիղիքական պատրաստության հաջողությունը կախված է նրանից, թե վորքան սերտ և նպատակահարմար կերպով չաղկապված են նրա միջոցներն ու մեթոդները մարտական պատրաստության մյուս բո-

լոր բաժինների հետ և թե վորքան զորամասի ամբողջ ներքին կարդ ու կանոնը նպաստում է մարտիկների ու հրամատարների Փիղիքական դաստիարակության ու կոփածությանը:

Հրամատարական կազմը պարտավոր է համառոքեն անցկացնել այդ կազմակերպչական-մեթոդական պահանջները, հեշելով, վոր նրանք պարանակորում են վոչ միայն խնդիրների ճշորոքն լուծելը, այլև նշանավոր չափով զորքերի ամբողջ մարտական ուսուցումը:

11. Ֆիղիքական պատրաստության ծրագրերը զորքամատերում (ռազմ. դպր. հաստ.), պետք է համաձայննեցված լինեն ըստ ժամանակաշրջանների (ժամանակի ու մեթոդիկայի նկատմամբ) ուսուցման պլանի մյուս գիտցիպլիններն անցնելու հետ՝ ուսուցման բոլոր բաժինների հաջորդականությունը պահպանելու համար:

12. Ֆիղիքական պատրաստության համար հատկացված առանձին ժամանակը թե՛ ուսուցման պլանում, թե արտադպրոցական աշխատանքի ժամերին և թե՛ որական կարգ ու կանոնի մեջ (առավոտյան Փիղիքական վարժություններ), պետք է ոգտագործվին միմիայն այդ նպատակի համար:

13. Ցամաքային զորքերի կադրային զորամտսերի համար Փիղիքական պատրաստության ծրագրերը հաշվառված են մեկ ուսուցմանական տարվա համար: Ցերկորույտ տարին հատկացված է հին ծառայողների հետադարձ մարզաների համար և նրանց անհրաժեշտ հրահանդական հնարքություններ պատվաստելու համար:

Զմեռային ուսուցման շրջանը պետք է ոգտագործել.

ա) մարտիկների ընդհանուր Փիղիքական ամբության, գաստիարակության և վարժեցնելու համար.

բ) յերթային և ռազմա-դահուկային պատրաստության համար.

գ) մարտիկներին բոլոր վարժությունները ճիշտ կատարելու տեխնիկային տիրապետելու համար, այն վարժությունները, վորոնք մտնում են ռազմակրթա-

կան մարմնամարզության բաժնի մեջ, և ձեռնամարտի ձեվերի մեջ.

դ) մարտիկների և հրամատարների Փիղիքական մարզանքի համար ձմեռնային դաշտավայրին գործողությունների պայմաններում:

Ամառնային ուսուցման շրջանում անց ե կացվում.

ա) զորքերի լողալու և ջրային արդելքները հաղթահարելու ուսուցումը.

բ) մարտիկների մարզանքը, առավելապես ստորաբաժնումների կազմում, քայլով շարժումներ կատարելու բազմապիսի ձեւով, հաղթահարելով բնական և արհեստական արդելքները և ձեռնամարտի նվազներում (կոմպլեքսի ձեռով).

շ) մարտիկների և ստորաբաժնումների բարդ (կոմպլեքսային) մարզանքը ամառնային կրթական վարժությունների բոլոր տեսակներով (դաշտային, շուրջադարձային քաղաքիկներում և աերանքում).

դ) մարտիկների և հրամատարների դաշտային Փիղիքական վարժություններում:

Զմեռնային և ամառնային ուսուցման շրջանների Փիղիքական պատրաստության բոլոր ձեւերն ու մեթոդները հարմարեցվում են զորական ստորաբաժնումների տակտիկական պատրաստության ծրագրերի և խնդիրների հետ: Մասնավորապես առանձնակի ուշադրություն պետք է դարձնել հակադադերով Փիղիքական մարզության վրա:

14. Ցերկորային զորամասերում փոփոխական կազմի Փիղիքական պատրաստությունը կառուցվում և հետեւյալ հիմունքներով.

ա) ծառայության առաջին տարվա հավաքում մարտիկները սովորում են ռազմա-կրթական վարժությունների կատարման տեխնիկան և ստանում են սկզբնական կրթական Փիղիքական մարզություն, նույնութեա և Փիղիկուլտուրական ունակություններ, վորոնք անհրաժեշտ են բանակից դուրս հետագա ինքնուրույն սպորտային պարապմունքների համար.

բ) հաջորդող հավաքներին անց են կացվում, - Փիգիքական մարզանք չարային, մասնադիտական և դաշտային պարապմունքների ընթացքում, ամենորյա առավոտյան Փիգիքարդություններ և արտադպրոցական սպորտային աշխատանք:

Ծանոթություն: Արտազորային կարգով ուսուցումն անցնելու ժամանակ նախակոչիները և արտազորայինները անցնում են Փիգիքատրաստություն ԲԳԿի շտարի հատուկ ցուցումների համաձայն:

15. Բացի դրանից, դորամասերի և ռազմկոմատների հրամատարական-քաղաքական կազմը պետք է բոլոր միջնորդներն ընդունի փոփոխիկ կազմին ու արտազորայիններին կազմակերպելու և ներգրավելու համար Փիգիքական կուլտուրայի ակտիվ պարապմունքների մեջ միջնավագային ժամանակամիջոցներում:

Այդ աշխատանքը տարկում ե սերտ կերպով կազմաստանական ու համաձայնության գալով տեղական քաղաքացիական կազմակերպությունների հետ (Փիգիքական կուլտուրայի խորհուրդներ, պրոֆմիություններ և այլն):

16. Ֆիգիքական պատրաստությունը պահանջում է ձեռք բերած արդյունքների հաշվառում և պարբերական ստուգումներ: Վորպես հաշվառման ձեռք հետեւյալներն են՝

ա) բժշկական հետազոտություններ.

բ) մարտիկների Փիգիքական պատրաստականության ստուգումներ.

գ) Փիգիքական պատրաստականության տեսչական զննությունները և

դ) մանյուգները:

Բժշկական հետազոտությունների, ստուգումների և զննությունների կատարման կարգը վորոշվում ե ԱՄ ՀՄ ՀՌԽ հատուկ հրամաններով և ԲԳԿի շտարի առանձին ցուցումներով:

Հաշվառման բոլոր հիշյալ ձեռքի արդյունքները պետք ե ուշադրությամբ ուսումնասիրվի հրամատարա-

կան կազմի կողմից՝ ուսուցման պարապմունքների մեջ համապատասխան կազմակերպչական-մեթոդական ուղղումներ մտցնելու համար:

17. Յուրաքանչյուր հրամատար պարտավոր և իմանալ և մշտական հաշվի առնելի իրեն հանձնած դրական միավորի (չարային ստորաբաժանման) Փիգիքական պատրաստականության աստիճանը, այլ կերպ անկարող կլինի նա ճշորեն գնահատություն տալ նրա մարտական զործողությունների համար պատրաստ լինելու մասին: Իսկ խաղաղ ժամանակ չի կարողանա ճշորեն կանոնավորել ուսումնական բեռնավորումը:

18. Հրամատարական կազմը պատասխանատու յե Փիգիքական պատրաստության պարապմունքների բոլոր ձեռքի կազմակերպության և անցկացման ճշտության համար (այդ թվում և արտադպրոցական պարապմունքների): Նա պարտավոր և կատարելագործել եր դիտելիքներն ու հրահանգչական ունակությունները: Փիգիքական պատրաստության և սպորտի ասպարեզում, ուշադրությամբ հետեւյալ իրեն յենթակա հրամատարների համապատասխան վորակի բարձրացմանը: Հրամատարական կազմը պատասխանատու յե այն վեառու համար, վոր կարող ե հասնել իրեն յենթակա մարտիկների առողջությանը:

Մասնավորապես պետք ե նախատեսված լինի դրժախտ դեպքերի հնարավոր լինելը ուղարապմունքների ժամանակ և պետք ե ապահոված լինի անհրաժեշտ «ապահովագրությամբ»: ապահովագրությունը կազմակերպվում ե այն բոլոր Փիգիքական վարժությունների պարապմունքների ժամանակ, վորոնք այս կամ այն ուիսկն են ներկայացնում պարապողների համար, և իրաղործիում ե հենց իրեն սովորեցնող հրամատարի կողմից անմիջապես կամ հատկապես այդ նպատակի համար նշանակված մարտիկների ուժերով:

19. Միջին և կրտսեր հրամակազմի կատարելագործան համար՝ ա) զորամասերում—պարբերաբար անց ե կացվում հրահանգչական-մեթոդական պարապմունքներ՝ հրամատար-մասնագետի ղեկավարությամբ, վո-

ըր հսկում ծ զորամասի Փիղիքական պատրաստության վրա. բ) զորամասերի հրամատարների կարգադրությամբ մասնագիտական պարապմունքներ են տարվում հրամկազմի հետ՝ Փիղպատրաստության առանձին լատիններից, որինակ՝ ուղղմադահուկային պատրաստությունից, ճեռնամարտից, լողից և այլն, —մինչև այդ բաժինների անցնելը կարմիր բանակայինների հետ. գ) կաղղմակերպում են կուրսեր-սեմինարներ միջին և կրտսեր հրամկազմի համար դիկիղիական կամ ճամբարային (կայազորի) մասշտաբով:

20. Զորամասերում (ուղղմա-դպրոց. հաստատություններում) տարվող Փիղիքական պատրաստության ամբողջ աշխատանքում պարտադիր ե համաձայն նշումը հրամատարական կազմի և զորամասի (ուղղմադպր հաստ.) բժշկական պերսոնալի միջև։ Վերջինս պետք ե մաննակցի վոչ միայն զորամասի (ուղղմա-դպր. հաստատ.) Փիղիքական պատրաստության բոլոր միջոցառումների մշակմանը, այլև զորամասի ներքին կյանքի կարգավորմանը ու նրա դաշտային աշխատանքի կազմակերպմանը։

12. Զորամասի (ուղղմա-դպր. հաստ.) ավագ բժիշկը պատասխանատու յէ զորամասի հրամատարի (ուղղմա-դպր. հաստ. պետի) առաջ.

ա) Փիղիքական պատրաստության և սպորտի ամբողջ աշխատանքի վրա բժշկական վերահսկողություն սահմանելու համար.

բ) մարտիկների և հրամատարների բոլոր տեսակի մարզանքների անցկացման ժամանակ սանիտարական-առողջապահական նորմաներն ու պայմանները պահպանելու համար.

գ) զորամասի ամբողջ անձնական կազմի Փիղիքուլտուրական (առողջապահական) պատրաստությունը բարձրացնելու համար։

22. Ֆիղիքական վարժություններով պարապմունքները, փորպես կանոն, անց են կացվում դասակարասակ՝ դասականների հրամատարների կողմից, վաշտի (հեծելավաշտի, մարտկոցի և այլն) հրամատարի հսկողու-

թյամբ։ Կրտսեր հրամկազմը վարժական խմբակների անմիջական ուսուցումն ե տանում։ Պարապմունքների ժամանակ մեկ սովորեցնողին պետք ե ընկնի վոչ ավելի, քան 12-15 մարդ։ Առանձին դեպքերում, վորապես սովորեցնողին ողնականներ կարող են նշանակվել հին ծառայող կարմիր բանակայիններից՝ Փիղիքական պատրաստականության գործում ամենից հառաջաղեմներին։

23. Զորամաս յեկած Փիղիքական պատրաստականությամբ անբավարար կարմիր բանակայիններն առանձնացվում են Փիղիքական պատրաստության պարապմունքների առաջին վրձնանում, կարմում են նրանցից առանձին խմբակներ, գասակ-դասակ կամ վաշտվաշտ-նայած թե քանի հոգի են թույլ պատրաստվածները։ Նրանց հետ հատուկ ծրագրով պարապմունքներ ե տարվում։ այդ ծրագրերը նկատի յե ունենում արագությամբ բարձրացնել մարտիկների ընդհանուր Փիղիքական զարգացումը (մտցնելով լրացուցիչ վարժություններ, վորոնք կրթականների համար կլինին նախալարաստական վարժություններ)։

Յերբոր վերոհիշյալ խմբակները Փիղիքական պատրաստությունից կտան դրական արդյունքներ, այն ժամանակ կարմիր բանակայիններին կարելի յե թույլ տալ մասնակցելու ընդհանուր պարապմունքներին իրենց սոսորաբաժնումների կազմում։

24. Յերիխասարդ կարմիր բանակայինների ընդհանուր ֆիղիքական զարգացումը լավացնելու համար անհրաժեշտ ե ֆիղիքական պատրաստության պարապմունքների համար բարձրակողմանի կերպով ոգտագործել այն ժամանակաշրջանը, ըստ ոկտոբերի համար մասնակի գորամա գալուց հետո մինչև պաշտոնական պլանային ուսուցման պարապմունքների սկիզբը։

Այդ հանդամանքը կնպաստի կարմիր բանակային մասսային ամենից ավելի հեշտությամբ և հաստատ կերպով յուրացնելու շարային, մասնագիտական (տեխնիկական) և զաշտային ուսուցման ուսակություններն ու կապահովի անհրաժեշտ բաղան՝ կրթական Փիղիքական մարզանքի համար։

25. Ֆիզիքական պատրաստության պարագաները՝ ները (բոլոր ձևերը) վորոշ պլանի յեն յենթարկվում, յենելով ուսումնական որվա բեռավորման հաջողությաց ամբողջությամբ վերցրած։ Զորքերի ճիշտ ֆիզիքական մարզության համար, ուսուցման չըջանի համար պարապմունքների ընդհանուր որագրացուցակը պետք ե կազմել այն հաշվով, վոր հաջորդաբար մեծանա որական բեռնավորումը որդանիզմի վրա։

62. Ֆիզիքական մարզանիքի նիշտ մեթոդիկան պահպանվ ե՝ խստրեն պահպանել հեշտից դժվարին անցնելու և հասարակից բարդին անցնելու աստիճանավորումն ու հաջորդականությունը։ Ֆիզիքական մարզանիքի գործում միանդամից մի բանից կտրուկ կերպով մյուսին անցնելը խանդարում և շարժումների (ձևերի) տեխնիկայի հաստատուն յուրացմանը և վտանգավոր և առողջության համար։

Այդպիսի հաջորդականություն ե պահպանվում և հանդերձանքի ու զինասարքի նկատմամբ։ Մարտիկների ֆիզիքական մարզությունը կրթական վարժությունների մեջ պետք ե ավարտվի մարտական հանդերձանքով և լրիվ սարքով, առանց նկատի ունենալու տարվա յեղանակն ու ժամանակը։

27. Ֆիզիքական պատրաստության բոլոր պարապմունքները պետք ե անցնել կենդանի, յուանդուն ման համար հրամանները պետք ե տալ վորոշակի ու կտրուկ։ Ուշադրությունը, իսկստ կարգապահությունը, զեկավարի ցուցումների արագորեն ու ճշտորեն կատարումը՝ պարտադիր պահանջներ են հանդիսանում։ Ֆիզիքական վարժությունների պարապմունքները պիտի նպաստեն շարային կարգապահության ամրացմանը։

28. Ֆիզիքական վարժությունների պարապմունքներին հրամատարական կազմը, պահանջելով մշտական ուշադրություն և կարգապահություն, միննույն ժամանակ պետք ե ձգուի այնպես անցնել, վոր արիությունն ու կենսուրախությունն ուղեկցեն այդ պարապմունքներին։ Ֆիզիքական վարժությունները կարմիր

բանակային ժամանակի սովորական և սիրելի գործը պիտի գարձնել։

29. Զեւնամուխի լինելով ֆիզիքական վարժություններին (կրթական կամ նախապատրաստական) այս կամ այն տեսակն անցնելուն, հրամատարը, համառոտ, բայց պարզ հասկացնում ե տվյալ վարժության նշանակությունը և ինքը որինակելի ձևով կատարում ե այդ վարժությունը։

30. Թույլ չի տրվում ընդհատել վարժությունը, պահել կարմիր բանակայիններին անշարժ դրության մեջ նրանց կողմից թույլ աված սխալներն ուղղելու համար։ Կատարած սխալների մասին ցուցումներ ե տալիս բոլորի առաջ վարժությունը վերջացնելուց հետո, կամ (համառոտակի) վարժության ժամանակ, առանց ընդհատելու վարժությունը։ Ձեռքբով սխալներն ուղղել արգելվում ե։

31. Նվազը կամ վարժությունը սխալ կամ ալարգությունը կատարելու դեպքում ուետք ե պահանջել, վոր կրկնեն, մինչև վոր կատարեն ճշտորեն և վորոշակիություն։ Համենայն դեպք կրկնությունը չսկսեք և խանդարի տվյալ պարապմունքը ընթացքը և առաջ բերի պարագողների ուժերի գերազանց լարում։

Շարժումների և նվազների (պրիոմ) տեխնիկակես ճիշտ կատարում անհրաժեշտ է պահանջել կարմիր բանակայիններից վոչ միայն ֆիզիքական պատրաստության դասերին, այլ և բոլոր գործնական ուսումնական պարապմունքների ժամանակ։

Յերբ շարժումը (նվազը) տեխնիկակես յուրացված կլինի, անհրաժեշտ ե կրկնողությամբ դարձնել այն վրապես հաստատուն ավտոմատիկ (սովորական) հմտություն։

Այդ պետք ե ձեռք բերել ինչպես հասարակ այնպես և ամենից ավելի բարդ նվազների ու գործողությունների ժամանակ։ Շարժումների ավտոմատիզմը անտեսում ե (պահպանում ե) բանվորական ներերին և խոշոր նշանակություն ունի մարտական պարագայի գործողությունների համար, զայրի լարված դրության ժամանակ։

նակ, յերբ ուշադրությունը ցրված ե և հոգնածություն կա:

32. Մարտական աշխատանքի զանազան տեսակների ժամանակ (յերթ, փաղելվաղք, ջրանցումներ, հրամագություն, հողային աշխատանքներ, հակագաղ հակած գործողություններ և այլն) խոչը նշանակություն ունի չնչառությանը կատարելապես տիրապետելը, կանոնավորել նրա թափը, ոփթմը և խորությունը՝ կատարվող ֆիզիքական աշխատանքին համեմատ: Այդ պատճառով ֆիզիքական պատրաստության բոլոր պարապմունքների ժամանակ հաստիկապես մատոնանչվում է չնչառության ընույթը, վորն ամենից ավելի յե համապատասխանում տվյալ նվազին (պրիոմին) կամ վարժությանը: Հրամատարական կազմը գործնականորեն պետք է յուրացնի ճիշտ նշանառության սկզբունքները:

33. Մարտիկի և հրամատարի ֆիզիքական պատրաստության գործում հսկայական նշանակությունն է արվում մրցակցական մեթոդին: Լայն ասպարեզ տալի կատարելագործմանը, յեղած բնական ձգտմանը, իր ֆիզիքական հատկությունները մարտական ընկերների ֆիզիքական հատկությունների հետ համեմատելուն, մրցակցությունը պարապմունքների մեջ մտցնում է կենսուրափության, ինքախության, ակտիվության, նախաձեռնության և իր ուժերի վրա վստահության ելեմենտներ:

34. Մանկավարժորեն նիշտ կիրառելով մրցակցության ելեմենտները կարելի յե պարապմունքների ամենաքարաք արդյունիներին հասնել վոչ միայն ֆիզիքական պատրաստության, այլև մյօւս ուսուցման դիմուլիների պարապմունքներին:

Միենույն ժամանակ չմետք ե թույլ տալ անառողջ ազարտ, անապարձություն, անհատականություն: Մրցակցական սկզբունքները թիգի ֆիզիքական պատրաստության մեջ պետք է նպաստեն մարտիկների ու հրամատարների մեջ ընկերականության և կոլեկտիվիզմի զգացմունքն ամրացնելուն:

35. Մրցակցական մեթոդի կիրառումը վոչ մի դեպքում չեպուք ե ի վետս մարտիկների առողջության վենի:

36. Վորպիս կանոն, ֆիզիքական վարժություններով բոլոր պարապմունքները թե՛ ձմեռը և թե՛ ամառը պետք է անցնել ողում (շենքից դուրս) և կարելի յե շենքը տեղափոխել միմիշայն վատ յեղանակին:

37. Ֆիզիքական վարժություններով պարապմունքներից մարտիկներն ու հրամատարներն աղատվում են ժամանակավորապես միայն զորամասի (ուղմա-ղպակ. հաստատությունների) բժշկի ծառայության տոմսակով: Կամ ամրութատորիայի մատյանում արված նշումով:

38. Զորական մասերի (ուղմա-ղպակ. հաստ.) հրամատարությունը մշտական կապ պիտի պահպանի և աշմաձայնեցում պիտի պահպանի ֆիզիքական կուլտուրայի ղեկավարող մյուս քաղաքացիական կաղմակերպությունների հետ:

### ԳԼՈՒԽ III.

## ԱՄԵՆՈՐՅԱ ՍՈԱՎՈՏՅԱՆ ՖԻԶԻՔԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՑՈՒՄՆԵՐ

39. Առավոտյան ֆիզիքական վարժությունները («լիցքային») ԲԳԿի զորամասերում (ուղմակ. հաստ.) նյատանկ ունեն՝ նյաստելու մարտիկների ընդհանուր Փիզիքական զարգացման ու վարժվածությանը Մասնավորապես նրանք պետք ե.

ա) արթնացնեն որդանիզմը գիշերովա հանգստից հետո և բնախոսական առույգ լիթք տան առաջիկա բան-վորական որվա համար.

բ) հավասարաչափ զարգացնեն և ամրապնդեն ջղամկանային ապարատը.

7) գաստիարակեն վերջավորությունների, վողնաշարի, իրջքի վանդակի շարժումների ճկունությունն ու նակություններ.

8) ամբացնեն սրտի արյունատար անոթների և նչառության սիստեմը.

9) մարդեն մաշկը ջերմաստիճաններին դիմանալու համար.

10) մշակեն ճիշտ կեցվածք, վազքի և թոփչքների ռակություններ.

11) դաստիարակեն ճշտորեն շնչելու սովորություն.

12) դաստիարակեն ամենորյա առավոտյան վարժություններ կատարելու սովորություն և պատվաստեն մարմինը պահպանելու առաղջապահական հմտություններ :

40. Առավոտյան Փիղիքական վարժություններով պարապմունքներն սկսվում են յերիտասարդ կարմիր բանակայինների դորամաս զալու հենց առաջին որերից և այդ պարապմունքները անց են կացվում ամեն որ ամբողջ ծառայության ընթացքում, անկախ յեղանակից և պարագայից :

41. Սահիտարական մասը և զորամասի Փիղիքական պատրաստության ղեկավարը պարտավոր են կենդանի, ըստ հանարավորության, իր ղեկուցման ժամանակ պատկերների ցուցադրումով նախորոք ծանոթացնել կարմիր բանակայիններին առավոտյան Փիղիքական վարժությունների գերի ու նշանակության հետ :

42. Առավոտյան Փիղիքական վարժությունները բջիջ զորամասերում (ռազմա-դպա. հաստ.) անց են կացվում հետեւյալ ձևերով՝

ա) առավոտյան մարմնամարզություն,

բ) վազքի վարժեցում .

տ) զրոսանքներ,

դ) շարժական խաղեր:

43. Պարապմունքների մերի բնորությունը՝ ձը-մեռըցուրտ յեղանակին (15 աստիճանից ցածր), բայց առանց քամու կամ քամի յեղած ժամանակ (8 աստիճանից ցածր)՝ անց ե կացվում զրոսանք, մնացած դեպ-

քարում ձմեռն ու ամառը հերթափոխվում են՝ առավոտյան մարմնաբարզություն, վազքի վարժեցում և շարժական խաղեր.

44. Ժամանակը՝ ամեն որ-անոթի՝ 10-15 բոպե վերկացից հետո, հետեւյալ հրամանով՝ տառավատյան Փիղիքական վարժությունների շարվիր», կամ համապատասխան պայմանական աղդանշանից հետո :

Տեվողությունը՝ 15-18 րոպեից վոչ ավելի՝ Պարապմունքների տեղը՝ բակում, հրապարակում :

45. Պարապմունքներին շարվիր՝ առավոտյան մարմնամարզությունը, վազքի վարժեցումը և շարժական խաղերը պետք ե անցնել դասակարգացման գուսանքը (մինչև քայլի և վազքի տեխնիկան յուրացնելը) պետք ե անցնել դասակարգացման, իսկ վերջում առավելապես կաշտի (հեծելավաշտի, մարտկոցի) կազմով :

Առավոտյան մարմնամարզության համար կարմիր բանակայինները շարվում են բացված սյունով զչորս չորս ձեռքերը դեպի կողմերը պարզած միջանցներով և հեռակայություններով :

46. Հանդերձի ձևը՝ առավոտյան մարմնամարզությունը, շարժական խաղերը և վազքի վարժեցումը պետք ե անցնել՝ Զմեռը—ամենորյա ձմեռային հագուստով, առանց գրատի (շինելի), դոտին կապել ազատ . Ամառը—ամենորյա ամառնային հագուստով (իրանը մերկ) կամ տրուսիկներով, վերջում դեպքում—բորիկ :

Զրոսանք ձմեռը—դրատները հագած և գոտիները կապած :

47. Ով և անցկացնում՝ կրտսեր հրամկազմը, վազքի (հեծելավաշտի, մարտկոցի) միջին հրամկազմի մարդկանց անմիջական հակողությամբ—հերթով :

48. Ամառը առավոտյան Փիղիքական վարժությունները պետք ե ավարտին վոտքերը և ամբողջ

մարմինը ջրով լվանալով (դուշ, լվացարան)։ ըստ  
Հնարավորության՝ կարճատես լողանալ գետում, լր-  
ճում և այլն. ձմեռը՝ լվանալ կամ չփել մարմինը ջը-  
րով (մինչև դուրին)։

49. Հանձնաբարիվում ե առավոտյան ֆիզիքական  
վարժություններն անցկացնել յերաժտությամբ։

### Բ. ԱՌԱՎԱԾՑԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԴՈՒԹՅՈՒՆ.

50. Առավոտյան մարմնամարզությունը բաղկա-  
ցած է վոչբարդ յերկտեմպ վարժություններից իրա-  
նի և մերջավորությունների համար։

Թե՛ ինչ բովանդակություն ունի առավոտյան  
մարմնամարզությունը և թե վարժությունների բաշխ-  
ման ինչ կարդ գոյություն ունի յուրաքանչյուր պա-  
րապմունքի ընթացքում, ցույց են տրված հետեւյալ  
սքեմայում։

### 51. Առավոտյան մանմնամարզության բովանդակության սինման

Վարժությունների խումբը  
և նշանակությունը

1. Զ Գ Վ Ե Լ Ը

Մինչև 2 ըովե տեղու-  
թյամբ։

Նպատակը

Թացածների կծկում և բո-  
րո հոգերի ուղղելու կոճքի  
վանդակին անշարժություն  
տալը և վեղաշարժի կոճքային  
մասին անշարժություն տալու։  
Միջին ուղղություն տալու։  
Թափերի վեղաշարժային նույն  
ուղիղ բռնելը (թիակների)։

Անցկացնելու ցուցումները.

Տեմպերը դանդաղ ե, շարժում-  
ները սահուն։ Ուղեկցվում են  
մկանների ուժեղ կծկուսով և խո-  
րը լիակատար շնչումով յետ կուա-  
նալու ժամանակ և արտաշնչու-  
մով առաջվա դիրքին անցնելու  
ժամանակ իրավա տարփում և  
յետ և առաջ զգի և վորհարի  
կրծքային մասի շարժումներով,  
առանց անցնելու գոտիատեղի  
վորհարին։ Յետ կատալին սկըս-  
վում ե վեղը և գլուխը յետ տա-  
նելով, բայց վոչ գլուխը յետ

կուացնելով, Ձեւքերի շարժումներ-  
ի ժամանակ արմունկները կանգ-  
նեցվում են ուսերի ուղղու-  
թյամբ, թիակները սեղմակում մո-  
տեցվում են վորհաշարը։

### Հ ա ն գ ի ս տ մ ե կ ի ց մ ի ն չ և կ ե ս ը ո պ ե

#### 2. ՎՈՏՔԵՐԻ ՑԵՎ ԶԵՐՔԵՐԻ ՏԱՐԺՈՒՄՆԵՐԸ

#### Մինչև 3 ըովե տեղությամբ.

Նպատակը

Ծնչուության և արյան  
շրջանառության աշխուժա-  
ցում։ Ճիշտ կեցվածքի մշա-  
կում։ Զեղոքերի ու գոտքերի  
լիակատար և աղատ շարժման  
զարգացում։ Մեջքի մկաննե-  
րի ամրացում։

Ակնելու բուրո գրությունների  
ժամանակ վոտքերի թաթերը  
պետք ե զուգահեռ լինեն։ Կանգ-  
նվածքը աղատ, աղանց ուսի հո-  
գերի և ծնկների լայվածության։  
Ծարժումներ կատարելին ճիշտ  
հիմնական կեցվածքի գրություն  
ախտի պահպանել ։ Հեղվել և զոտկա  
տեղը չծռելի ըստնի թեքումը զեղի  
առաջ կատարել կոնքի և աղդրի  
հոգերով, իսկ զեղի յետ կրծքի  
մասի վաղնաշարը ծռելով (բայց  
վոչ զոտկատեղի մասի վողնաշա-  
րը ծռելով)։

### Հ ա ն գ ի ս տ մ ե կ ի ց մ ի ն չ և կ ե ս ը ո պ ե

#### 3. ԻՐԱՆԻ ԿՈՍՑԵԼԸ ՑԵՎ

#### ԲԵՔԵԼԸ ԴԵՊԻ ԿՈՂՄԵՐԸ

#### Մինչև 4 ըովե տեղությամբ.

Նպատակը

Վորհնաշարի ճկունության  
զարգացումը նրա ամբողջ  
յերկարությամբ և կոնքի ու  
կրծքի վանդակի շարժման  
անկախությամբ կոճքի վան-  
դակի շարժունության մշա-  
կում։ Փորի ու մեջքի մկան-  
ների ամրացում և վորովայնի  
կոռոչի մասսամ։

Իրանը դեպի կողմը կուացնելին  
չպետք ե դառնառ առ առաջ ընկնիւ  
Ծարժումները զեխավորապես կա-  
տարվում են վորհնաշարի ճու-  
նությամբ։ Պարապմունքների  
ժամանակ պետք ե հերթափոխել  
կուացնելը թեքելու հետո

Հանգիստ մեկից մինչև կես ըոպե

4. ԻՐԱՆԻ ԿՈԱՑՆԵԼԸ ԱՅԱՉ  
ՅԵՎ ՅԵՏ

Մինչև 3 ըոպե տեղությամբ  
Նպատակը

մկունաւթյան և շարժունության զարգացում դիտկատեղում և կրնքա-ազդրային հոգերում: Մեջքի և փորի մկանների ամրացում: Վորովայնի հառաջի որգանների մասսամ:

Հանգիստ մեկից մինչև կես ըոպե

5. ՅՈՒԶԵՆԵՐ ԿԱՄ ՎԱԶՔ  
ՏԵՂՈՒՄ

Մինչև 2 ըոպե տեղությամբ

Նպատակը

Աշխուժացնել արյան շրջանառությունը և շնչառությունը: Մշակել վերջանակությունների ճիշտ համաձայնեցնում թօիչքի ժամանակ:

Կոնքա-ազդրային հոդերում շարժումների թափի մեկատարություն:

Ձեռք բերել շարժումների ճիշտ համաձայնեցում և նրանց առաջականություն:

52. Վարժությունների ծրագիրը պետք է անցնել ընդին (կարգային զորամասերում, ուսագմա-դպրոցական հաստատություններում) ծառայության առաջին տարրում մինչև ճամբար դուրս գալու ժամանակամիջոցում, այն հաշվով, վոր ամբողջ մնացած ժամանակը ոգուագործվի հետագա կառավարելազորման համար, յերբ կառավարման համար իրավա սրբազնից կառաջազգվեն (մարդություն, տեսակ, շարժումների թվի մեծացում):

53. Յերբոր կարմիր բանակայինները լավ յուրացաքած կլինեն վարժությունները, դրամասի համարարությունը, իր հայեցողությամբ, կարող և պարբերաբար առավոտյան մարմնամարզությունը լրացնել—մարմնամարզականք քաղաքիկում (городок) կառարվող մակրմանամարզությամբ, կազմելով պարապմունքներ՝ ուզմակըթական մարմնամարզության նախապատրաստական վարժություններից: Դաշտային քաղաքիկում վարժությունները առավոտյան «լիցքային» կարգով կարելի յի թույլ տալ միայն այն ժամանակ, յերբ այդ վարժությունները մարտիկները տեխնիկապես լավ յուրացըել են Փիզիքական պատրաստության գասերին: Յերկու դեպքում ել պարապմունքները պետք և պահպանեն իրենց «լիցքային» բնույթը:

54. Առավոտյան մարմնամարզությունը, ինչպես և առավոտյան ֆիզիկական վարժությունների մյուս ձևերը, պետք է անցնել հասուկ աշխույժ, յեռանդուն տեմպով: Հրամանները ղեկավարի կողմից տրվում են վրոշակի և կարճ:

55. Վարժության անցկացման սենյակ: Վարժության անունը: Ցուցադրություն: Հրաման-յեման դրություն: Կառարումը հաշվերով: Շարժումների կանոնադրումը: «Ազատ» դրության վերաբառնալը:

Յեթե հարկավոր ե. հիմնական սիստեմի համառոտ ցուցադրություն, նոր վարժության անունը, ցուցադրություն, կառարումը հրամանով և այլն:

56. Առանձին վարժությունների միջև կարճ դադարներ, սկզբում մեկից մինչև կես ըոպե տեղությամբ (այդ ժամանակ ղեկավարը տալիս և վարժության անունը և անձամբ ցույց և տալիս այն,) իսկ

վերջում ավելի քիչ։ Ընդհանուր առմամբ, սովորաբար, բոլոր դաշտաների տևողությունը 4 րոպեյից ավելի չպիտի լինի։

Կատարման ժամանակ վերացվում են սխալները նույն վարժությունները կրկնելով հաջորդ պարագաներին։

Եռորաքանչյուր վարժություն կատարելու ժամանակ, անհրաժեշտ ե սկսել դանդաղ տեմպից, աստիճանաբար արագացնելով այն, սակայն վոչ ի վեաս շարժումների վրորչակիության։

57. Առավլոտյան մարմնամարզության ծրագիրը վարժությունները կատարելու հետեւյալ յերեք տեմպն ենախատեսում։ (Հչառության արագության համեմատ)։

ա) Դանդաղ—յերբ մեկ շարժման սկզբից մինչև հաջորդ շարժման (հաշվի) սկիզբը անցնում է 6—5 վայրկյան ժամանակ, այսինքն՝ մի րոպեյում 10—12 շարժում։

բ) Միջին—յերբ մեկ շարժման սկզբից մինչև հաջորդ շարժման (հաշվի) սկիզբն անցնում է 4—3 վայրկյան, այսինքն՝ մեկ րոպեյում 16—20 շարժում։

տ) Արագ—յերբ մեկ շարժման սկզբից մինչև հաջորդ շարժման (հաշվի) սկիզբն անցնում է 2—1½ վայրկյան, այսինքն՝ մեկ րոպեյում 30 և ավելի շարժումներ։

Արագ տեմպի դեպքում ներշնչումն ու արտաշընչումը կատարվում են մի քանի շարժումների ընթացքում, և վոչ թե ուղեկցում են նրանցից յուրաքանչյուրին, ինչպես այդ սովորաբար անում են մյուս տեմպերի ժամանակ (դանդաղ և միջին)։

58. Բոլոր վարժությունները կատարվում են դեկավարի հաշվելով։ Ընդվորում միաստեսակությունից խուսափելու համար հարկավոր ե ընդունել հաշվելու դանագան ձևեր։

Տանորություն։ Առավլոտյան մարմնամարզության վարժությունների նկարագրության ժամանակ հաշվվը նշանակված ե առանձին պարբերության մեջ։

Եկրը մեկ կամ մյուս դասը կրկնվում է մի շարք պարագմունքների ընթացքում, այլևս ցույց տալ հարկավոր չե։ Վարժությունը կարելի յե կրծատ անվանել (համար ըստ կարգի, դուրս գալու դրություն, շարժումների բնույթ)։

Վարժության կատարման սկզբի համար հրաման և տրվում՝ «Սկսի՛ր» և դրանից հետո սկսվում ե հաշվելով։ Վարժությունը դարձարեցնելու համար ձայնով շեշտվում ե նախավերջին հաշվելու ժամանակը և իսկույ հրաման և տրվում —«Կաց», վորով «զգաստ» հըրամանի համար սահմանված դրությունն են ընդունում։

59. Եռորաքանչյուր վարժության կատարման թիվը աստիճանաբար մեծանում ե հետզհետեւ նրա տեխնիկան յուրացնելով, բայց առավոտյան մարմնամարզության սքեմայով վարժությունների տվյալ խմբի համար նշանակված ժամանակի սահմաններում (տես հոդ. 51)։

60. Առավլոտյան մարմնամարզության ժամանակ հասուլ ուշադրություն պիտի դարձնել նիշտ շնչառության վրա։

#### Գ. ՎԱՐՉԻ ՄԱՐԶԱՆՔ

61. Վազքի մարզանքը կազմված ե քայլքի և վազքի շարժումներից, վորոնք իրար միջև հերթափոխ ժամանակ։

վուժ են՝ համապատասխան ընդհանուր բնախոսական  
(Փիղիոլոգիական) բեռնավորման աստիճանաբար մեծացնելուն 10 րոպեյի պարապմունքների ընթացքում:

Վազքի մարզանիքի կողմանը շաղյուսակը

Ա մ ի ս ն ե ր	Քայլե	Վազքի	Քայլե	Վազքի	Քայլե	Վազքի	Համար
							Համար
1-ին ամիս . . . . .	1	1	2	2	4	10	
2-րդ » . . . . .	1	1	2	2½	3½	10	
3-րդ » . . . . .	1	1½	1½	2½	3½	10	
4-րդ » . . . . .	1	2	1½	2½	3	10	
5-րդ » . . . . .	1	2	1½	3	2½	10	
6-րդ » . . . . .	1	2½	1½	3	2	10	

ՆԱԽԹՈՒԻԹՅՈՒՆ: 1. Ազյուսակում տրված են մոտավոր (ցանկալի) թվեր պարապմունքների յուրաքանչյուր ամենի վերջում:

2. Յուրաքանչյուր պարապմունքի մեջ մացնել 30-ից մինչեւ 60 մետր տարածության արագ վազք յերկրորդ վազքի վերջում:

3. Վեց ամսից հետո բարձրացնել ընդհանուր բնախոսական (Փիղիոլոգիական) բեռնավորումը քայլքի և վազքի տեմպի հաշվին ժամանակի նույն սահմաններում:

4. Յերկրային հավաքների ժամանակ սքիման պետք է կիրառել յերկրային հավաքների տեղության համեմատ հաշվի բառելով և փոփոխիկների սկզբանական Փիղիքական վարժվածությունը:

62. Կողմորոշ աղյուսակով քայլքի ու վազքի համախտեսված ժամանակի սահմաններում թույ-

լատորվում ե ավելացնել վազքի փոխերի թիվը (արագացնել փոխերը), պարապմունքների միայն առաջին յերկու շաբաթվա ընթացքում:

